
ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ. Մ., ԹՈՍՈՒՆՅԱՆ Գ. Բ., Գրաբարի դասագիրք, «Զանգակ-97»
հրատ., Ե., 2004, 384 էջ:

Հանրապետության բուհերի հասարակագիտական ֆակուլտետներում այսօր պատշաճ ուշադրություն է դարձվում գրաբարի ուսումնասիրությանը, որն իրականացվում է գերազանցապես Ա. Աբրահամյանի և Հ. Ավետիսյանի ու Ռ. Ղազարյանի կազմած դասագրքերով: Ուրախալի է, որ մասնագետները որոնում են նոր ուղիներ՝ գրաբարի դասավանդումը առավել արդյունավետ և կատարյալ դարձնելու համար: Ասվածի վկայությունը գրաբարի բուհական նոր ձեռնարկն է՝ «Գրաբարի դասագիրքը», որ հեղինակել են բանասիրության դոկտորներ Լ. Խաչատրյանը և Գ. Թոսունյանը: Հեղինակները ճիշտ են բանաձևել դասագրքի բուն նպատակը. «Քերականական գիտելիքների, գործնական վարժությունների և մատենագրական հատվածների մատուցումը նպատակ ունի մշակել սովորողների գրաբար լեզվագրությունը և գաղափար տալ գրաբարի լեզվառձական օրինաչափությունների մասին» (էջ 4):

Դասագիրքը գրաբարը ներկայացնում է համակարգված կերպով՝ ներառելով լեզվի կառուցվածքային մակարդակները. հնչյունաբանության բաժնում տրված է գրաբարի հնչյունական համակարգը՝ հնչյունները, նրանց տեսակները, երկբարբառները, եռաբարբառները, հնչյունափոխական երեվոյթները, ձևաբանության բաժնում քննված են բոլոր խոսքի մասերն իրենց քերականական կարգերով ու ձևաբանական հարացույցներով, շարահյուսության բաժնում ներկայացված են գրաբարի շարահյուսական իրողությունները, նաև լեզվառձական առանձին հնարքներ և այլն:

Դասագիրքն ունի դժվարություն ներկայացնող բառերի համառոտ բացատրական բառարան, որում տեղ են գտել միայն դասագրքում զետեղված գրաբար օրինակների, վարժությունների և բնագրային հատվածների դժվար հասկանալի բառերն ու բառիմաստները՝ հիմնականում բացատրված հոմանիշների թվարկմամբ, երբեմն էլ՝ նկարագրական եղանակով:

Հեղինակները նպատակադրվել են կազմել այնպիսի դասագիրք, որն ավելի դյուրին դարձնի գրաբարի գործնական ուսուցումը: Դա նրանց հաջողվել է: Դրան նպաստել է հեղինակների՝ բուհական մանկավարժական երկարամյա փորձառությունը, գրաբարի խոր իմացությունը, նաև նմանօրինակ դասագրքերի կազմության հայրենական և սփյուռքահայ հեղինակների փորձը:

«Գրաբարի դասագիրքը» նախատեսված է գրաբարի ամբողջ դասընթացի համար, որ մատուցվում է շուրջ երկու հարյուր դասաժամով: Յուրաքանչյուր դաս բաղկացած է երեք մասից՝ քերականական նյութից, նյութին համապատասխան վարժությունների համակարգից և ընթերցանության ու թարգմանության համար նախատեսված մատենագրական հատվածներից, որոնք հիմնականում քաղված են V դարի գրաբար ինքնուրույն մատենագրությունից և Աստվածաշնչից:

Տեսական նյութը մատուցվում է ուսանողին մատչելի եղանակով: Հաջող են կազմված վարժությունները: Ի դեպ, յուրաքանչյուր դասանյութի վերաբերյալ տրված են երեք-հինգ վարժություններ, որոնցում կան ուղիղ և հակադարձ թարգմանության առաջադրանքներ: Հակադարձ թարգմանության վարժությունները (արդի հայերենից գրաբար) հնարավորություն են ընձեռում սերտորեն

կապակցել միմյանց գրաբարի և աշխարհաբարի քերականական իրողությունները, գտնել աշխարհաբարի համարժեք բառերը, բառաձևերն ու արտահայտությունները գրաբարում: Այդ նշանակում է՝ դասագիրքը գրաբարը ուսուցանում է աշխարհաբարին զուգընթաց: Հետևաբար, արդի հայերենին լավ տիրապետող ուսանողները հեշտությամբ կյուրացնեն նաև գրաբարը: Արժեքավոր է այն, որ աշխարհաբար թարգմանությամբ են ներկայացված նաև տեսական մասում բերված գրաբարյան օրինակները:

Հեղինակները մեթոդապես ճիշտ են վարվել, երբ թեքվող խոսքի մասերը (հոլովման և խոնարհման հարացույցները) ներկայացրել են աղյուսակի ձևով, որը նյութի հաղորդումը դարձնում է ավելի տեսանելի ու դյուրընկալ:

Դասագրքում մեծ տեղ է հատկացվել գրաբարի շարահյուսական իրողություններին (էջ 249-321): Այս բաժնում մանրամասն ուսուցվում են գրաբարի նախդիրներն ու նախադրություններն իրենց քերականական իմաստներով ու կիրառական արժեքով: Առաջին անգամ լինելով՝ դասագրքում տեղ են գտել տրական խնդրով նախադրությունները՝ *առընթեր*, *գունակ* (=նման, պես, ըստ), *դէպ*, *գոյգ* (=նման, պես, համապատասխան), *ի միջի* (=մեջ, ներսում), *կից* (=հետ, միասին), *հանգոյն* (=նման, պես), *հեճուկս* (=հակառակ, ընդդեմ) և այլն:

Հեղինակները բավարար չափով են անդրադարձել գրաբարի նախադասությունների կառուցվածքային տեսակներին, նախադասության անդամների արտահայտությանը, համաձայնությանն ու շարադասությանը:

Հաջող է ներկայացված նաև առկայացման քերականական կարգը, այն է՝ հոդերի գործածությունը գրաբարում: Ի դեպ, դասագրքում քերականական ամեն մի երևույթ հաստատվել է գրաբար մատենագրությունից քաղված տեղին ու դիպուկ օրինակներով: Բնագրային հատվածներ են ընտրված ոչ միայն V դարի մատենագրությունից, այլ նաև Սեբեոսի, Գրիգոր Նարեկացու և Արիստակես Լաստիվերտցու գործերից: Կարծում ենք՝ դա ինքնանպատակ չէ, քանզի այդ հատվածների միջոցով կարելի է գաղափար կազմել հետդասական գրաբարի վիճակի և նրանում կատարված փոփոխությունների մասին: Յուրաքանչյուր բնագրային հատվածի վերջում տրված են անձանոթ բառերի, բառաձևերի, ոճական արտահայտությունների ընդարձակ բացատրությունները, որոնց քանակը երբեմն անցնում է երկու տասնյակից: Դասագրքի բառարանի հետ միասին տողատակի այս ծանոթագրությունները, անշուշտ, կհեշտացնեն ուսանողների կողմից բնագրերի թարգմանությունը: Այժմ դժվար է խոսել դասագրքի թերությունների մասին (դրանք հնարավոր կլինի ցույց տալ բուհում առնվազն մեկ տարվա գործածությունից հետո):

Մեկ առաջարկ՝ իբրև ցանկություն. ելնելով նրանից, որ գրաբարն այսօր ուսումնասիրվում է բուհերի նաև ոչ բանասիրական (պատմության, գրադարանագիտության և այլն) բաժիններում, կարծում ենք՝ անհրաժեշտ է ստեղծել սույն դասագրքի մի այլ տարբերակ այդ բաժինների ուսանողների համար՝ կիսով չափ կրճատելով ընթերցանության և թարգմանության համար տրված մատենագրական հատվածների ծավալը:

Կարծում ենք՝ «Գրաբարի դասագիրքը» քննություն կբռնի բուհերի մասնագիտացված ֆակուլտետներում՝ ի շահ ոսկեղինիկ գրաբարի ուսուցման:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ս. Ա.